




1148

L. II.6







# ՃԱՇԱԿԻ ՈՍԿԵՂԻՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ

ՀԱՆԴԻՍ ԱՄՍՈՐԵԱՅ

ՊԱՏՄԱԿԱՆ, ԳԻՏՆԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ  
ԱՅԼՈՎՔՆ ՀԱՆԴԵՐՁ

ՀՆԴ ԽՆԱՄՈՎ

Ա. ՄԵՏԱԹԻԱՑ ԳԱՐԱԳԱՅԵԱՆ Եւ Յ. ԳՈՒՐԳԵՆԻ

ՏԱՐԻ Բ.

ԹԻՒ Ա. — 1 ՑՈՒՆՎԱՐ



Ի Կ. ՊՈԼԻԱ  
ԱՌ ՅՈՎՈՆԻՍ ԳԱՐԱԳԱՅԵԱՆ

1887

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Ա.Զ.Դ. և ԽՆԱՄՄԱԿԱԼԱՅ ՀԱՆԴԻՍԻՒՄ

## ՊԵՏՄԱԿԱՆ

Պատմութիւն Հայ մատենագրութեան . . . . . Ա. Մ. Գ.  
Դիւտ եւ ազդեցութիւն արուեստի Տպագրութեան . Ա. Մ. Գ.

## ԳԻՏՆԱԿԱՆ

Թէ զիա՞րդ համեմատին բարուք մարդակերպը ընդ  
մարդոյ ֿ . Յ. Գ.

## ԲԸՆԱՍՈՒՐԱԿԱՆ

Ե Գրոց Տեխմաքայ . . . . . . . . . . . . . . . . . . Գ. Մ.  
Աստուած . Յ. Գ.  
Առանձինն բանք Հայերէն լեզուի (Յ.) . . . . . . Յ. Գ.



# ՃԱՇԱԿ

ՊԱԿԱՎԱՆ ԴՐՅԱՔԻ ԽԱՋԱ

## Ա Զ Դ

Ի սկզբան ասու, ի մուտս Բ. շրջանի Հանդիսիս, փութամք զտուաջինն հասուցանել զպարտիս շնորհակալութեան մերոյ որոց միանդամ եղեւ կտմ բարի քաջալերել զմեղ յայս գործ բանասիրութեան հնոյ Հայերէն լեզուի : Գոհութեամբ մեծաւ յայտ առնեմք աստէն՝ զի ոչ սակաւք յանուանի բանասիրայ, որոց ցանկալի է պահել յաւէժ յանեղծութեան զբարբառ գարուն Մեսրոպեանց զամենազօր և զգեղեցիկ, ոչ գաղարեցան ի յորդորելոյ զմեղ եթէ բանիւ և եթէ գրով՝ կալ մնալ անյողդողդ և մատուցանել յառաջ զոր եդաքն առաջի :

Առ այսու ազնիւ քաջալերութեամք չմարթէր մեզ ապաքէն համարել ինչ զշշունջ տգիտութեան զոր շնչէին ոմանք ասու և անդ, զանհանճար ընդվայրախօսութեանց առեմք և զպարսաւագիր խծրծից, զորս ընթեռնլոյ իսկ արժանի առնելչէր մեղի դէպ, թողթէ պատասխանւոյ :

Երկրորդ անդամ՝ յայտ առնեմք զի այս ամ եւս ածցի Հանդէսո ի լոյս նովին չափով բովանդակութեան, այսինքն յէջս վեշտասան, և մերթ հանդերձ յաւելուածովք, զոր և յանցելումն ոչ գանդաղեցաք առնել յառաւել օգուտ ընթերցանելեաց՝ ընծայեալ զլնտիր ընտիր հատակոտորս նախնեաց :

Իսկ զերկոտասան ամսաթերթս Ա. ամին ունիմք ի մտի տալ միւսանդամ տպագրել և ամփոփել յառանձինն մատենի . — զի և օրինակք պակասեն . — ի պէտս մանաւանդ մանկուոյ գպրոցաց :

# ՊԱՏՄԱԿԱՆ

## ՅԱՒԵԼՈՒԱԾ

Ի ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, ՄԵՐ ԶՀԱՑ ԼԵԶՈՒՆ.

Ի սկզբան անդ երկար յօդուածոյն մերոյ, որոյ վերնագիր է «Պատմութիւն Հայ լեզուի» (Ա. տարի, Էջ 47), զերկուց իմն խոստացաք ճառել, «Նախ՝ երկայնագոյնս զծննդենէ և զգարգանալը Հայ լեզուին մինչեւ ի հասանել նորա յարբունս, կամ, մինչեւ ի մատենագրութիւն առաջնոյ կիսոյ Եւ դարուն որ է ոսկեղինիկ ժամանակ Հայ դպրութեան . և երկրորդ՝ զծերանելը կամ, այլով բանիւ, զանկմանէ նորա և զպէսպէս կերպարանացն զոր առ նա անտի մինչեւ առ մեզ» : Զառաջընմէն, այն է զծննդենէ և զգարգանալը Հայ լեզուին, ճառեալ արդարեւ երկայնագոյնս, ի հասանել մեր ի մատենագրութիւն անդք առաջնոյ կիսոյ Եւ դարուն, առ կարճութեան ժամանակին, զի կատարած տարւոյն մօտ առ կուրծս կայր, ստիճանացաք իմն համառօտս հատանել, որպէս յայտնի իսկ առացեալ է ի վախճան կոյս պատմութեանն . «Բազում ինչ կայր մեզ արդարեւ ասել զայսմանէ, որպէս և զառանձին ինչ իրաց և զսեպհականութենէ միոյ միոյ ի դրոց Ռուկեղին դարուն, զբարերարն ազգեցութենէ նոցա համօրէն ի վերայ տոհմային լեզուին, և զայլոց եւս կարեւորաց . այլ զանց իմն առնել զայսու ամենայնիւ կարեւոր թուեցաւ մեզ, զի մի աւելի ինչ յերկարեցուք զպատմութիւնս որ արդէն իսկ քան զշափն յերկարեցաւ՝ հայեցեալ ի փոքր հասակ Հանդիսաւ» (Ա. տարի, Էջ 203) :

Ի դնել մեր սակայն ի մտի միւս եւս ամ շնորհել Հանդիսիս, ի դէպ դատեցաք միւսանգամ զթել պատմութեանն ի ձեռս առեալ զխոստումն մեր կատարել մերովաննն : Ապա ոչ կրկնումն ինչ է պատմութիւնս զՀայ մատենագրութենէ, այլ լրումն այնր զոր ժամանակն կամ մանաւանդ երկիւղն չլինելը բաւական յառաջ մատուցանել զՀանդէսս ամ մի եւս՝

ետ մեզ փութալ հաստանել ի կարճոյ : Պատմութիւնս զՀայ մատենագրութենէ ունի բովանդակել զպատմութիւն մատենագրութեան զառաջնոյ կիսոյ Ե. դարուն , և նախ՝ զանգիրն մատենագրութիւն Հայ վիպասանութեան իրրե զորրոց կամ կարապետ նորին , թէպէտ և ոչ սակաւ ինչ ճառեցաւ զսմանէ յառաջնում մասին անդ : Յետ բերելոյ ի մէջ զՀայ մատենագրութիւն վիպասանայն և թարգմանչաց , ունիմք գալ յերկրորդ կէտ անդը անդը նպատակի մերոյ խոստմանս , այն է՝ ցուցանել զճակատագիր լեզուին ի թարգմանչաց անտի մինչեւ առ մեզ :

### ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի ՍԿԶԲԱՆՔ ԱՆՏԻ ՄԻՒԶԵՒ ՑԱՌԱՋԻՆ ԿԵՍ ԱՆԴԻ Ե. ԴԱՐՈՒ

Յետ խօսելոյ , յառաջնում միամեայ շրջանի անդ Ճաշակիս , զպատմութենէ ծննդեան և աճման Հայ լեզուին , չէ ինչ անդէպ , նա կարի խակ վայելուչ , ճառել յերկրորդումս զարդեանց այնր աճման , այն է զՀայ մատենագրութենէ , անդստին ի ժամանակէ անտի անգիրն վիպասանութեան , մինչեւ ի գրովն առ թարգմանչօք , և անտի մինչեւ առ մեզ : Այսպիսի ջան վաստակոյ , որպիսի մերս է , չպարտի , որպիս կարծեմք , աւելորդ իմն և գուղնաքեաց թուել որոց ցանկանն գիտել զպատմութիւն , նա մանաւանդ տեսանել խոկ իրբեւ աչօք զհետս անցից լեզուին յընթացս այնչափ յեղափոխ ժամանակաց , որ վեր ի վայր հարեւալ եղծին զամենայն որ ինչ միանգամմ բունն էր և հին և արդարեւ տոհմային : Գոլ գոն առ մեօք գիլք որ զսմին նիւթոյ ճառեն . բայց ոչ յայս սակա մեզս ինչ ոք մեզ գրիցէ գալ միւսանգամմ զնովիմք , ապաքէն այլով հայեցուածով . մանաւանդ զի մերս ոչ պատմութիւն եւեթ լինելոց է հանդերձ քննութեամք հանդամանաց գործոց և լեզուի ծանօթագոյն և նշանաւորագոյն մատենագրաց մերոց իւրաքանչիւր դարու , այլ և մանաւանդ ունիմք բերել ի մէջ ի միոջէ միոջէ ի նոյցանէ առատութեամք հատակոտորս , որ և՝ զբնութիւն և՝ զարդիւնս լեզուին իւրաքանչիւր դարու օրինակօք կացուցանիցեն յանդիման ընտրող և խուզարկու մոտաց :

Յառաջնում ձառի անդ մերում որ զպատմութենէ լեզ-  
ուին , բերաք ի մէջ մերովսանն , միշտ համառօտիւ , զպէս-  
պէս հանդամանս յօրինուածոյ հայերենին . զառատութիւն  
բանիցն ի տալ զազգի ազգի երանդս տեսլեանց և խորհրդոց ,  
զկցելն (ածանցել) նորա և զյօդել (բարդել) սքանչելապէս ,  
և մանաւանդ զհասարակն և զբնական տասցուած յայլափոխ  
անդր դարձուցանել , և զայլ ևս բազմոդիմի հնարան որովք չէ  
մարթ ուրանալթէ հայերէնն մեր հին երեւեցուցանէ յինքեան  
կատարեալ բովանդակութիւն լեզուի ի կարգի հնդիկ-եւրո-  
պական լեզուաց , ոչ անհաւասար հնոցն , Յունին և Հոռոմա-  
յեցոյն , և ոչ աննման նորոցն , Գաղղիականին և Անդղիակա-  
նին . և այս անտի մանաւանդ յայտ է , զի բաւական եղեւ  
Հայերէնն , և՝ ի հնումն և՝ զարդիս , տալ մեծաւ մասամբ ըն-  
տիր թարգմանութեամբք զերեւելի երեւելի գործս մատենաւ-  
գրաց հնոց և նորոց : Ի պատմութեան Հայ լեզուի որ յառաջ  
քան զայս՝ զայնու եւս չարարաք զանց յիշելթէ զիարդ յետ  
ջրթափիելոյ լեզուին և լինելոյ հուժկու , տեսեալ զնա բաւա-  
կան ի մատենագրութիւն , նախ վիպասանք առ հեթանոսու-  
թեամբ , և ապա թարգմանք առ քրիստոնէութեամբ , արկին  
զայն ի կիր , առաջինքն՝ անդիր որպէս հաւանութեան է ,  
սքանչելի երգովքն մրմնջոց ի գրօսանս ժողովրդեան , վերջինքն՝  
նոյնչափ և եւս տւելի սքանչելի մատենագրութեամբք ի հո-  
գեւորն և ի մատարոր պէտս ազգին :

Որովհետեւ անհնար էր և՝ լեզուին և՝ մատենագրու-  
թեան չկրել նշանաւոր փոփոխմունս ըստ փոփոխելոյ քաղա-  
քային պայմանաց ազգին , հարկ իմն էր դարուց յաջորդե-  
լոց միմեանց տալ լեզուին , ըստ ազգեցութեան դարուն յո-  
րում գրեցաւն , ազգի ազգի գոյնս որ ընտրեալ որոշին ի  
միմեանց ըստ յատակութեան և ըստ ճաշակի :

Արդ , սկսեալ ի ժամանակէ անտի անգիրն վիպասանու-  
թեան՝ բերցուք նախ որչափ ինչ մնացորդք կան յերգոց  
անտի , որք , թէսլէտ և անծանօթ ժամանակաւ , են սակայն  
(զի այլազգ ընդունել չէ մարթ) հնագոյն քան զքրիստոնէու-  
թիւնն կամ քան զքրիստոնէական մատենագրութիւն ,  
ուստի և ի հարկէ համարելի ծնունդ հեթանոսական ժամա-

նամի : Մտեալ ապա ի գրովն ժամանակ՝ կուտեսցուք առատագոյն եւս հատակոսորս , նախ ի մատենագրութենէ անտի առաջնոյ կիսոյ Ե. դարու , և ըստ նմանէ յիւրաքանչիւր գարէ մի ըստ միոջէ , թողեալ հայ ճաշակաց ընտրել թէ յորում ի նոցանէ իցէ խնդրեի և գտանիցի Հայերէնն իբրւեւ արդարեւ աղդային և անխառն :

Զմնացորդս երգոց վիստասանաց այլուր , ի պատմութեան անդ լեզուին , բերեալ է մեր միանգամ (տես Ա. տարի , էջ 93, 94) . այլ ներեսցի մեզ դնել աստ միւսանգամ ամիսոփ ի միում վայրի , որպէս վայել իսկ է յամբողջութիւն ժողովածոյիս : Թող զմանր մանր մնացորդս զորս յիշէ Խորենացին ուրեք ուրեք ըստ դիպաց , առաջնոն և երկայնագոյն , թերեւս և հնագոյն է «Երկնէր երկինն» :

(Պատուացի յառաջ)

Ա. Ա. Գ.

### ԳԻՒԾ ԵՒ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ ԱՐՈՒԵՍՏԻ ՏՊՈԴԲՈՒԹԵԱՆ

Արուեստ տպագրութեան հնարեցաւ յԵւրոպա , որպէս թուին , մօտ յամն 1440: Զէ ի մերում դիտաւորութեան մանր ի մէջ բերել զպատմութիւննորա , և ոչ առնուլ ի քնին թէ ո՛ոք արդեօք եղև նախ հնարագիւտ արուեստին , Հարցմացին Կոստէ'ր թէ Մոկունտիացին Կութթեմպէրկ , կամ , որ ճշմարտագոյն եւս է , չիցէ' արդեօք Վենետացւոց բերեալ զպատմութիւն ի ձենաց աշխարհէն ուր սովորութիւն էր , ասեն , արկանել զայն ի կիր անդստին իբր յերկուց հազարաց ամաց հետէ :

Առաջն հրավարատակ հրամանի վասն տպագրութեան տուաւ ի Վենետիս յամին 1441 . ուստի յայտ է թէ ոչ սակաւ ամօք յառաջ ծանօթ էր անդ արուեստն :

Կարծի իմն թէ յամին 1440 Կոստէր հան ի տիպ մատեան մի անուանեալ «Հայելի փրկութեան մարդկան» . կութթեմպէրկ և ֆոււսդ հանին զԱստուածաշունչ մատեանն որ անուանեալ կոչի «Մոկունդեան» , մօտ յամն 1445: Այլ արուեստն արագ արագ եհաս ի կատարումն : Տպագրութիւնն

Սոկունդեան որ եղև ի ձեռն երկուց գերմանացի ճարտարաց , որպէս յիշեցաք , տակաւին զարմանալի է իրրե . օրինակ ճարտարութեան արուեստին :

Ի համարի առաջին գործոց տպագրելոց են գիրն խրախուսանաց ի պատերազմ յԱրեւելս յամին 1454 . նոյնպէս երկու թուղթք ներողութեան Պապին Նիկողայոսի Ն . ի որ ունին զնոյն թիւ տարւոյ :

Ի սկզբան անդ իւրաքանչիւր էջ միաձոյլ միատարր փորեալ քանդակէր ի վերայ կոճեղ փայտի . այլ յետ սակաւոց հնարեցան տիպք շարժունք , այն է՝ մէն մի նշանագիր ձուլեալ ի մետաղէ ուրոյն առանձինն , և տողեալ կարգեալ ըստ սկատշամի , որպէս առնի ի գրելն :

Երկուք ի գործաւորաց ֆաւորի , մօտ ուրեմն յամին 1465, սկսան վարել գիւտիւն յԽոտալիա : Սոքա հանին ի լցո զգործս Խալիտանտեայ , նոյնպէս զգիրսն Կիկերոնի զՊատշաճէց , և զՅըրբոյն Աւգուստինեայ՝ զԲաղաջն Աստուծոյ :

Արուեստ տպագրութեան անց ի Փաղիա յամին 1469, և զկնի ամաց ինչ ծաղկէր յամենայն քաղաքս մեծամեծս Եւրոպայ : Տպագրիչք վաճառէին անձամք զիւրեանց գիրսն , և թիւ համարոյ օրինակացն տպագրելոց յիւրաքանչիւր նուագի էր յայնժամ երեք հարիւր : Միածալիցն յաջորդեցին չորեքտալեանք , և յամին 1501 երեւեցան երկոտասանածալք :

Գրեթէ ի սկզբան լսկ գին մատենից նուազեաց իրեւ չորս հինգերորդս քան զոր էլոն յայնժամ , և շահուն զոր մատուցանէր արուեստն նորվնծայ՝ եղաւ չափ և սպայման արքունի հրովարտակաւ որ յայտ առնէր թէ քանոյ վաճառելոց և զորոց իրաց ճառելոց էին մատեանք : Համալսարանն Բարիզու եղ սակ գնոյ վաճառման նոցա , և կարգեցաւ հասարակաց տեսուչ յանուն տէրութեան և եկեղեցւոյ : Ոհդէն ի սկզբան եղև յայտնի՝ թէ ոչ դոյզն ինչ լինելոց էր ազգեցութիւն տպագրութեանն ի մեծ շարժումն անդք մոտաց որ սկիզբն առ երեւել միանգանայն և ընդ հանուր :

Ոմանք ի մատենագրաց կարծեցին գտանել զչափ մոտաւորն կրթութեան ազգաց Եւրոպայ ի կատարած կոյս հնդետասաներորդ դարուն՝ ի չափոյ անտի մատենից տպագրելոց

առ միում միում ի նոցանէ : Այլ այս չէ ուղիղ և ճշգրիտ ըստ ամենայնի . քանզի ի յաճախութիւն տպագրութեան մատենից պիտոյ են ոչ հանձար միայն մատենագրութեան , այլ և արուեստդիտութիւն և վաճառաշահութիւն . ապա մատեանք յաճախեն անդ մանաւանդ ուր առաւել է ճարտարութիւն արուեստից և տուրեառիկ փոփոխումն : Սակայն ի յաճախութենէ եւս մատենից տպագրելոց ջանալ գտանել փոքր ի շատէ զչափ յառաջադիմութեան ազգի չէ ամենեւին անդէպ և առանց արգեանց ճշնարտութեան , մանաւանդ յորժամ զրուտումասէր և զընթերցուածասէր բարս ժամանակին գիտել կայցէ առաջի , և այլ ազգ հասանել այնմ չիցէ հնար : Յամէ անտի 1470 մինչ ցամն 1500 ածան ի հրապարակ յԵւրոպա առաւել քան տասն հազար գրեան ընդ մեծ և ընդ փոքր , յորոց յոլովագոյնք ելին յիտալական մամլոց , և այս տպաքէն ցուցանէ թէ իտալիա կայր յայնժամ ի գլուխ մոտաւորն շարժման : Ի միջոցի անդ ամաց որ ի վերոյն յիշեցաւ , սյն է՝ յամէն 1470 մինչև ցամն 1500 , ածան ի լցու մատեանք իբրև 2855՝ ի Վենետիկս , 925՝ ի Մեդիոլան , 298՝ ի Պողոնիա , 925՝ ի Հռոմ . այս ամենայն յիտալիա , և քաղաքք իտալականք թուով իբրև յիտուն էին տեալք մամլոց : Արտաքոյ իտալիայ , 751՝ ի Բարիկ , 530՝ ի Կողոնիա , 382՝ ի Նիւրեմպէրկ , 351՝ ի Լիփսիա , 320՝ ի Պազէլ , 526՝ ի Ամբրագպուրկ , 256՝ յԱւկապուրկ , 116՝ ի Լուվին , 134՝ ի Մոկունդիա , 169՝ ի Տենենդէր , 130՝ ի Լոնտոն , 7՝ յՈքսՓորտ , 4՝ ի Սենդալպան : Ապա քաղաքն Վենետիկացւոց էր ի կարգի անդ առաջին , Անգլիա՝ յետնագոյնն , և այսմ տան հաստատութիւն և այլ եւս ոչ սակաւ դէպք որ բաւական են ի ցուցանել՝ թէ իտալիա էր այնչափ յառաջադէմ մոօք անդէն իսկ յամին 1400 , որչափ եղեւն Մեծն Բրիտանիա աստ ուրեմն յամին 1500 , այն է՝ իբրև հարիւր ամաւ յետոյ : Թէ Բարիկ եւս քան զԼոնտոն յառաջադէմ էր յայնժամ՝ է նոյնպէս յայտնի , և եղեւ եւս իմն աւելի նշանաւոր ի տասն ամսն որ զկնի , մինչդեռ չորեքհարիւր երեսուն մատեանք ածան ի լցու ի Բարիկ , իսկ ի Լոնտոն՝ քսան և վեց և եթ : Լոյս գիտութեան երթայր և նուազէր ըստ հեռանալն յիտալիայ , որ

գող վառարան իմն էր նորա : Յամին 1550 , այն է՝ իբրև  
միով դարու յետոյ քան զգիւտ տպագրութեանն , եօթն  
մատեանք եւեթ էին տպագրեալ ի Սկոլովիա , և չէր և ոչ մին  
ի նոցանէ կարեւոր : Դոյզն ինչ է , այլ արժանի յիշատակու-  
թեան , զի առաջին մատեան տպագրեալ ի Սպանիա յամին  
1474՝ եղեւ ճառ զՊառնինէ կուսէն :

Երկու են առանձինն արդիւնք գիւտի տպագրութեան ,  
նախ այն՝ զի նուազեցոյց զգին մատենից և բազմացոյց զնո-  
սս , երկրորդ անգամ՝ զի ընթերցման ետ տակաւ ունել  
զտեղի հրահանգութեան ի բեմի : Զառաջնմէն , այն է՝ զթե-  
թեւագինն լինելոյ և մանաւանդ զյանախելոյ մատենից ա-  
սելի է , զի մատեանք չեղեն երբեք նուազագոյն քան զբա-  
ւականն , և ոչ կարի ծանրագնի : Որպէս առ Պտղոմեամբք էր  
յԱղեքսանդրեան մուսէոնին առանձինն արուեստանոց զըր-  
չութեան , ուստի ելանէին մատեանք ըստ բաւականին , նոյն-  
պէս յետոյ ուրեմն ի վանորայս էր ուրոյն սրահ որ գպրա-  
նոցն կոչէր , սահմանեալ ի կարգել և յընդօրինակել մատ-  
եան : Զբաղումնս այս որ նստելովս վճարի՝ ախորժելի է մա-  
նաւանդ որոց սիրենն զմենակեցութիւն հանդարտութեան և  
ստէպ գալ զիսոկմամբ հոգեւորացն : Այլ ընթերցողս , որ կա-  
րեւորագոյն մասն են ընկերութեան զարդիս , գտանեմք ի  
հնումն դուն ուրեք և անօսր առ Յոյնս , ի Հռոմ և յԵգիպ-  
տոս , և առ այլս ի հին ազգաց , բաց ի Ճենաց : Ուսումն ա-  
ւանդէր առ կինսն գրեթէ ի բերանոյ միայն :

(Մատուցի յառաջ)

Ա. Մ. Գ.

## Գ Ի Տ Ն Ա Կ Ա Ն

Թէ ԶԻԱՌԻ ՀԱՄԵՄԱՏԻՆ ԲԱՐՈՒՔ  
ՄԱՐԴԱԿԵՐՊԻՑ ԸՆԴ ՄԱՐԴՈՅՑ

Բազումք ի մարդկանէ , զհետ երթեալ եւեթ զհոգեւոր  
խելամութեանց , չկամին համարել մերձաւորութիւն ինչ  
ունել մարդոյ ընդ ազգո կասկաց . զի այն կարծիք են նոցա՝  
եթէ չիք ինչ զօդ միջին որ զպայման մոտաց մարդոյ մերձե-

ցուսցէ ի մտաւոր պայման կապկաց մարդակերպից , որ թուին նոցա գուզնաքեացք յոյժ խորհրդովկ : Ա.Յ.Լ , հանդերձ այսու , չէ պարտ մոռանալ զի ոչ սակաւք յազգաց մարդկան հազիւ իմն գլեն մոօք կամ յայտնութեամբք բանաւորութեան զազգս մարդակերպ կապկաց :

Ահա որ յերկրին Աւստրալիացւոց բնակք այդրենածինք , որոց աղջմունք բնակաւորք գազանութեան օդնեսցեն մեզ ի հարկանել ընդ միմեանս զիմացութիւն մարդոյ և զմարդակերպից : Խառնազանն Պողոքիւտոսի , հանդոյն այնոցիկ զոր ետևո Մաքսիմիլիանոս ոմն իշխան ի դաշտին Ռիոյ Պերինդեայ , ի չինի ուրեք որ ի վերայ գետոյն Եռուբրայ , թմբիր անհնաւրին ապշութեան բերէ յինքեան ընդաբոյս բարուք : Սաստիկ եւս են բարք ապշութեան Օպոնկոսից և Տոքոսից , ազգաց վայրենեաց Ավրիլիկեցւոց աշխարհին : Մարթիցի արդարեւ գազանադոյն վայրենոյ իսկ լինել երբեմն բազմագութ և հաւատարիմ առ նմանիս իւր . որպէս տեսաք աչօք մերովք զոմանս ի վայրենեաց ածելոց յԵւրոպա , ոչ բազում ամօք յառաջ , հիւանդանալ և դարման գտանել յընկերաց . զայս և այլուր տեսին ոմանք ի ճանապարհորդաց : Ա.Յ.Լ և ի մարդակերպս է տեսանել զնոյն գութ գորովալիր , զնոյն սէր և զհաւատարմութիւն ընդ միմեանս . զոր օրինակ յորժամ ի նմին գառագդի իցեն Օրանի-ութանք (ազգ ինչ մարդակերպ կապկաց) քանի մի : Ոչ սակաւք յազգաց անասնոց յայտ ածեն յինքեանս գութ ի փոքրկունս և սերտ սէր ամուսնութեան : Ժողովուրդք և՝ վայրագատունք և՝ քաղաքաւորեալք , որպէս յայտ է , նախճիրս եղեռանց անպատումս առնեն այր ընդ ընկեր անագորոյն մտօք , և չէ երբեք յիրաւի զդործս նոյա անուանել տմարդիս կամ անարժան մարդոյ . զի ամենայն անագորոնութիւնք և կոտորածք և ոճիրք և յափշտակութիւնք որ ի մարդկանէ գործիցին՝ գան անվրէս զհետ բուսոյ բարուց ժողովորդոց . գործք ամենեւին մարդկենք են որ ի ճեռն մարդոյ առնիցին եղեռունք . զի յազգս անասնոց ոչ ետես ոք ուրեք ինչ ըստ գմին օրինակի : Չեն իրաւուք բնաւ ընդ մի համարել գահին մի արխնարբու մարդախանձ , զորպիսիս էր տեսանել յաւուրս Արհաւրաց Գաղի-

ացւոց ազգին , և սովարեկ սովալըուկ վագր մի որ ի հարկէ իմն և ի կարեաց որովայնի բեկեալ կերիցէ ստնաւորս յանասնոց քանի մի , որպէս և այլք ի գիշակեր գաղանաց առնեն զնոյն ի նմին բռնութենէ կարեաց : Միանդամայն իսկ ասացեալ՝ խաղաղիկ են մարդակերպք , և գործ զօրէն թըշնամւոյ ոչ գործեն ընդ միմեանս և ընդ մարդկան . յիրաւի է ասել զի խաղաղութեամք և գթովք աղեաց անցանէ զանցանէ կապիկ մարդակերպ զբաղում մարդկամք :

Այլ անդունդ անհնարին գոյ ընդ մին և ընդ միւսն , այնու զի ազգ մարդկան առաւելեալ կրթութեամք գայ ի զարդացումն մտաւոր բարձր յոյժ , ուր և զկարի մտացիս անգամ ի մարդակերպ անասնոց ածել հազիւ թէ մարթիցի ի կրթութիւն ինչ անմտաւոր : Ընդաբոյս չարութիւն մարդակերպ կապկաց՝ զայրացեալ ըստ ածել տիոց նոցա՝ չսայ ումեք զգօնացուցանել զմի յանբանաւորաց անոի և ածել ի կրթութիւն կատարեալ : Մարթի զմարդակերպս առնել օժանդակս մարդկան , մինչև տալ նոցա սպաս հարկանել մեզ անմտութեամք . այլ ոչ որպէս զընտանի անասունս առ հասարակ : Իմ այն են հաւատոք՝ զի հնար է ամենայն ազգաց մարդկան գնալ ի կատարումն մտաւոր , այլ ոչ նովին չափով կամ հանդամանօք մտաց : Զէ՛ և չէ մարթ , որպէս հաւատումն , թէ Աւասարալիացիք երկրին Գուլինսլենտի հասանել կարիցեն ի կրթութիւն մտաց այնալիսի , մինչև մտանել ի կշիռ ընդ հանճարեղս ազգի մերոյ (Գերմանացւոց) : Այլ և քանի՛ անցին դարք ժամանակաց , սաել չբաւեմ , ի սկզբանէ անտի վայրենութեան մերոյ մինչև ի հասանել յայս չափ մտաւոր զարդացման յորում այժմս գտանիմք : Բայց ոչ սակաւք և յազգաց վայրենեաց , ի կարի իսկ յետնելոց մտօք , եղեն անդամք մարդկութեան պիտանացուք ամենեւին : Փոփոխամունս բարուց որպիսի՞ն եղև մեզ տեսանել , յընթացս ամաց ութսնից , առ բնակիչս Սանտուիչ կղզեաց , առ Թահիթեցիս և առ այլս ի վայրենի ազգաց Աւստրալիայ : Ոչ և գոյզն ինչ էր կրթութիւնն զոր ասպետաբար իմն ի հանդէս ածէին դեսպանք Մատակասքարի , որպէս տեսաք յաւուրս մեր , ի Պերլին , յաղնուագոյն ժողովս մայրաքաղաքին . շատ իսկ էին

այն բարք գեսպանացն ածել զմեզ ի հաւան, եթէ ոչ ի զար-  
մացումն, զի երթայ և ծաղկէ կրթութիւն մտաւոր առ բնա-  
կիչո կղզւոյն այնորիկ Ափրիկեայ:

(Մատուցի յառաջ)

Յ. Գ.

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### Ի ԳՐՈՅ ՏԵԼԵՄԱՔԱՅ

Երբեւ հասանէին ի գուռն այրին կալիփուեայ, հիանայր  
սքանչանայր Տելեմաք ի տեսանելն իրս զարմանալիս որ շինա-  
կան իմն պարզութեամբ զաշս մոդէին զտեսողաց: Ոչ էր անդ  
տեսանել ոսկի կտոմ արծաթ, ոչ վէմս մարմարեայս, ոչ սիւնս  
կձեայս, ոչ պատկեր նկարէն և ոչ անդրիս մարդկակերպա-  
րանս: Էր այրն փորեալ ի ժայռի, և ի վերոյ ձգեալ կամար որ  
դրուագեալ ծածկեալ էր կոսկճովք և կոնքովք և խեցեղէն պա-  
տենիւք. և որթ մի մատալատունկ զմանը մանր և զփափուկ  
ուռուն տարածեալ ծածկէր զգետինն, հասարակ յամենայն  
կուսէ: Զեփիւռք քաղցրացունչք, հակառակ գորիխառն տա-  
պոյ ճառագայթից արեգական, զովութիւն իմն հեշտական  
պահէին անդ, և աղբերքն որ մեղմագոյնս հոսէին ընդ մարգս  
զարդարեալս կակաջիւք և մանուշակօք՝ յօրինէին աստ և անդ  
լուալիս բաղանեաց պայծառ և ջինջ ջրովքն, պէս գունակ ա-  
կան վանի: Ծաղիկք փափուկք ազգի պղգիք համապայծառ զար-  
դարէին զոսապաստակն կանաչ և դալար որ պատէր զայրիւն:  
Էր անդ և պուրակ մի ի տերեւախիս ծառոց անտի որ բարձ-  
եալ բերեն պտուղս ոսկիս և ծաղիկս, որ յիւրաքանչիւր փո-  
փոխմունս տարւոյ նորոգ փթթեալ հոտս անուշունս սփուեն՝  
քան զամենայն հոտ անուշութեան սաստկագոյն: Թուէր իմն  
պուրակն իրբեւ պսակ եգեալ ի գլուխ մարգագետնին, և առ-  
նէր հովանի թանձրամած իրբեւ զգիշեր զոր ճառագայթք ա-  
րեգական ոչ կարէին փարատել: Ոչ լսէին անդ այլ միայն  
երգք թռչնոց և մրմունջք գետակի միոյ որ աղմկեալ փրփրեալ

հոսէր ի բարձուէ ժայռի միոյ և խաղայր անյանէր ընդ  
դաշտն լայնատարած :

Քարայրն կալիփսեայ էր ի զառիվայրի ուրեք ի վերայ  
ըլրոյ , ուստի տեսանելի էր ծովը որ մերթ խաղաղեալ հան-  
դարս և միատարր ողորկ երեւէր իբրեւ զապակի , մերթ  
մոլեգնեալ յուղեալ մուշէր վարաղաբար և ընդհարեալ խոր-  
տակէր ընդդէմ ժայռից լեռնաձեւ ամբարձեալ զալիսն ընդ-  
ոստուցեալս : Յայլմէ կուսէ էր տեսանել գետ մի յորում ե-  
րեւէին ցիր աստ և անդ կղզեակի ինչ պատեալք չուրջանակի  
ծաղկալից կակլեօք և բարձրաբերձ կաղամախիւք որ զգլուխոն  
ամբարտաւանս ձգէին յամպս : Վտակըն այնոքիկ պէսպէս որ  
զկղզեակսն կազմեալ յարդարէին և քերէին անցանէին առ ա-  
փամբք նոցա՝ խազս իմն թուէին խաղալ ի դաշտի անդ . կի-  
սոցն ջուրքն յատակը հոսէին արագընթաց գնացիւք . կիսոցն  
մօրացեալ ծովացեալ զկայ առեալ կային անշարժք . իսկ այլ  
լոցն՝ երկարաձիգ շրջանօք յետո ընդ կրունկն երթային իբ-  
րեւ թէ յիւրեանց ի բուն ակն ի վեր դառնայցեն , առ ի  
չկամելոյ թողուլ լքանել վվայրսն զայնոսիկ սքանչելիս : Երե-  
ւէին ուրեք ուրեք ի հեռաստանէ բլուրք և լերինք բարձունք  
որ մինչեւ յամպս ելեալ կցէին . և տեսիլ նոցա նորանշան  
նորասքանչ պատկեր իմն ցանկալի յարդարէր ի վայելչութիւն  
աչաց տեսանելեաց : Երինք մօտաւորք ծածկեալ էին ուռովք  
դալարովք որ փունջս փունջս երեւեցուցանէին . խաղողն ա-  
ռաւելք քան զծիրանի պաղպաջուն թաքչել չմարթէր ընդ տե-  
րեւովք , և որթն ծանրաբեռնեալ կորացեալ կքէր ընդ ովկու-  
զովք : Թղենիք և ձիթենիք և նոնենիք և այլ ծառատունիք  
ազգի ազգիք միահաղոյն ծածկեին լնուին զդաշտն և զպար-  
տիզի իմն մեծի կերպարանս տային նմա :

Կալիփսոյ , յետ ցուցանելց Տելեմաքայ զգեղեցկութիւնս  
զպառոսիկ բնութեան , ասէ ցնա . Երթ և հանգիր այժմ . տ-  
ւասիկ թաթաւեալ թացեալ են հանդերձք քո . ժամ է արդ  
փոխելց զնոսա . յետոյ ուրեմն մորթ է գալ մեզ դարձեալ ի մի  
վայր և բան ի մէջ արկեալ խօսել երկարատոյնս . և յայնժամ  
պատմեցից քեզ վէպս ընդ որ խանդաղատեալ շարժեսցի սիրտ  
քո : Ի նմին ժամու եմոյծ նա զծելեմաք և ընդ նմա զՄենոտոր

յանխուլ իմն և ի ներքսագոյն կողմանս այրի միոյ որ մերձ  
յիւր այրն էր : Անդ Նիմիայք խարոյկ լուցեալ էին մեծաւ  
փութով ի փայտից կիտրոնի որ հոռ անոյշ սիռէր ընդ ամե-  
նայն կողմն , և հանդերձեալ յարդարեալ էին ագանելիս վասն  
նորեկ հիւրոցն :

Տելեմաք իբրեւ ետես պատրաստեալ վասն իւր զնուրը  
զասուի պարեգօտն որ սպիտակագոյն էր քան զմիւն , և զոս-  
կեհուռ պատմուձանն ծիրանի , հեշտութիւն իմն որ բնա-  
կաւորն է երիտասարդութեան՝ զգայր անդէն ի սրափ իւ-  
րում վասն այնչափ շքեղ փառաւորութեան հանդերձանացն :

Յայնժամ Մենտոր խստագոյն իմն բարրառով ասէ ցնա .  
Միթէ այսոքի՞կ իցեն , ով Տելեմաք , խորհուրդքն որ տիրե-  
լոց են սրտի որդւոյն Ոդիսեայ : Դու փոյթ յանձին կաջիր  
պահելոյ զանուն քաջութեան և զբարւոք համբաւ հօրն քոյ  
և յաղթելոյ դժնդակ բամտին որ հալածէն զքեզ : Այր մի  
երիտասարդ որ համակ ընդ զարդ գայցէ և ընդ պամուձանո  
սնոտիս՝ չէ արժանի խմաստութեան և փառաց : Բանզի այնո՞  
են փառք որ գիտիցէ ժոյժ ունել տանել տառապանաց և  
զամենայն հեշտութիւն կոխել առ ոտիւք :

Յոդւոց հանեալ Տելեմաք , ասէ . Օ՞ն անդր , քամւ լիցի .  
քան թոյլ տալ ինձ գրգութեան և զեղխութեան մտանել  
ի սիրտ իմ՝ լաւ է թէ հարցեն և սատակեսցեն զիս Դիք : Ոչ ,  
ոչ . ոչ երեք նկուն եղեալ յաղթահարեսցի որդին Ոդիսեայ  
ի պատրանաց թուլամորթ և իդասուն մեղլ կենաց : Բայց ,  
աղէ , որպիսի չնորհք իցեն մեղ պարգեւեալ յԱստուածոց  
անտի , զի յետ նաւարեկ լինելոյ մերոյ գտանեմք աւասիկ  
աստ զԴիւցակինդ կամ զմահկանացու զայդ կին որ այնչափ  
բարեօք երախտեաց լցուցանէ զմեզ :

Երկի՞ր , ասէ Մենտոր , զի մի չարեօք լցուցէ զքեզ :  
Առաւել խորշեսջիր ի խաբուսիկ և ի պատիր անուշից անտի ,  
քան ի ժայռից որ խորտակեցին զնաւ քո : Նաւարեկութիւնն ,  
նաև մահ իսկ չեն ինչ այնչափ դժնդակ , որչափ հեշտութիւնք  
որ ընդ առաքինութիւն բախիցին : Զգոյշ լեր , մի՛ հաւատար  
ամենայնի զոր նայն պատմելոց է քեզ : Յանդուգն է երի-  
տասարդութիւնն և յանձնապատուան . թէպէտե կարի տկար

իցէ և զաղիալցիուն և խախուտ , սակայն համարի թէ առ  
ամենայն ինչ կարող է և թէ չիք ինչ որ զարհուրեցուցանիցէ  
զնա . թեթեւագոյնս իմն և յանդգոյշ յանձն իւր լինի ա-  
պաստան : Բայց դու միտ դիր զի մի' որսասցէ զքեղ բանիւք  
ողղքանաց որ մտանեն ի սիրտ քո , իբրև զօձ որ սպրդիցի  
ընդ ծաղկամբք : Երկիր ի ծածկելոյ թունէ անտի : Մի՛ ինչ  
վստահ յանձն լինիջիր . ունկն եւեթ դիր խրատու բանից  
իմոց :

(Մատուսցի յառաջ)

Ա. Գ.

## Ա Ս Տ Ո Ւ Ա Յ

Այո՛, անտես է Տէր Աստուած յոր հաւատալ պարտ է մեզ :  
Անտես թէպէտ նա յաչաց , այլ ի յայտնել ըզփառս նորին՝  
Որպիսի՛ շրեղ վըկայր ի հանդիսի կան ինծ հանդէպ :  
Օ՞ն , ասասչիք , երկինք եւ Ծով , եւ դու , երկիր , խօսեաց մեզ .  
Ո՞ այն բազուկ կարաց կախել ըզծեզ , աղէ , անթիւ աստեղք .  
Պայծառ գիշեր , ասս մեզ , ո՞ արկ ըզքնւ ըզքող քո զայդ .  
Զի՞նչ մեծութիւն , ո՞վ երկինք , եւ քանի՛օն վայելցութիւն .  
Յայտ ածէր ինծ զոմն արարիչ՝ արարեալ դիր զամենայն ,  
Եւ սըփոեալ շուրջ ըզլոյս ընդ անապատըս մեր ընդ բնաւ ,  
Զոր օրինակ ընդ երեսս անդոց մերոց ցանեալ ըզհող .  
Եւ դու , զահո՞ մեծարքանչ , որ ազդ առնես զայզուն գալուստ ,  
Աստղ անփոփոխ , ո՞յն եւ մի հանապազորդ , նորոգ յաւէծ ,  
Որո՞վ կարգաւ , ո՞ Արեգակն , եկանես դու յալեաց ծոյց .  
Պարգեւել մեզ ըզճառագոյթ արդասաւոր պայծառութեանդ .  
Զօրհանապազ մնամ ես քեզ , զօրհանապազ առնես դու դարձ .  
Ե՞ս միթէ կոչեմ ըզքեզ , ե՞ս ընդացից քոց յօրինիչ .  
Իսկ դու , որոյ զայրուցը զերկիր բղոր կամին կլանել ,  
Ո՞յր մեռն ի յատակիդ արգելու զբեզ , ամենի Ծով .  
Ընդունայն են քո նըզունք առ անցանել ըստ բանտ քոյին .  
Վաստկութիւն ալեաց քոց մեծ զիջեալ ցածնու առ ափամբք քովք :

Լ. ՌԱՋԻՆ

Ա. Գ.

# ԱՌԱՆՁԻՆՆ ԲԱՆՔ

## ՀԱՅԵՐԻ ՀԵՂՈՒԹԻՒՆ

**Բ**

**ԲԱԶՄԱԽՈՅՑ ԼԻՆԵԼ.** շար պըբութել՝ հետաքննել։ \*Մի՛ բազմախոյզ լիցուք առ Աստուած՝ զոր ինչ արար և զոր առնէ։ —\*Մի՛ բազմախոյզ լինիր՝ եթէ զիարդ կամ որով օրինակաւ (առնէ)։

**ԲԱԶՄԱԿՈԽ ԼԻՆԵԼ.** պէջ ճը շար երեսլ։ \*ի տուն բարեկամի քո, ասէ, մի՛ յաձախեր բազմակոխ լինել. գուցէ ատիցէ զքեղ։

**ԲԱԶՈՒԿ ԱՌԱԶՈՒԿ.** գունդաբենդ . իումբ իումբ : \*իբրեւ զբազմութիւն զօրաց . . . զմեծանիստ . . . դաշտօքն բաղուկ առ բազուկ իջանեն (մարախոք)։

**ԲԱԺ ԱՌԵՆՈՒԼ.** գունդէն՝ վարչէտ առնել։ \*Գուցէ ընդ որդւոյն տալոյ՝ զնա բաժ առնուցու։

**ԲԱԿ ԱՌԵՆՈՒԼ.** շարք պարել։ \*Ապա գարձեալ տեսանէր զծերութիւն փառաւորութեան սքանչելի . . . որ չուրջ զնովաւ բակ առեալ ունէր։ —\*Իբրև զսատանայական թատերք բակ առեալ կայաք և հայէաք։ —\*Բակ առեալ ծրանայ չուրջ զնովաւ։ —\*Ղոյսն որ չուրջ զնովաւ բակ ունէր։

**ՆՈՅՆ ԲԱՆՔ ԵՆ.** նոյն իրաց ըստուիլ. նոյն պէտք է իմանալ։ \*Նաև զսպանութենէ նոյն բանք են։ —\*Նաև յինչս առնուլ նոյն բանք են։

**ԲԱՆ ԿԱՄ ԲԱՆՍ Ի ԳՈՐԾ ԱՌԵՆԵԼ.** մէնիլ. յես+ զնել։ \*Բանի գործ արասցուք վարդապետել ձեզ։ —\*Բանս ի գործ արարին ունել զիս, և որոգայթս թագուցին ինձ։

**ԲԱՆ ԻՆՉ ԱՍԵԼ.** դէմ իօնիլ. որբուռնջ ընել։ \*Մինչև յե՞րբ ժուժկալեալ ասիցես՝ թէ ահա համբերեցից տակաւին . . . աղէ ասա բան ինչ ի Տէր, և վախճանեաց։

**ԲԱՆ ՈՒՆԵԼ.** իօս+ կտղել. իօս+ մէկ ընել։ \*Բան ունիմ ընդերանելի ծերոյն, և նա ընդ իս, թէ որ յառաջեսցէ ի մէնջ, աղաչեսցէ զջէր Աստուած, զի ժողովեսցէ և զընկերն։

ԲԱՆ ՏԱԼ. իսու դալ: \*Տուր ինձ բան զի այգը բնակեսցիս . և ետ նմա բան ի յայրին մնալ:

Կամ՝ համար դալ: \*Պարտ է ամենեցուն պատրաստ լինել որպէս թէ բան տալոց են դատաւորին :

Ի ԲԱՆԻ ԱՌԱՆԵԼ. համոցէլ . իբէն կողմն առնել: \*ԶՊամպէսս ի բանի առնէր , զի նովաւ դառնայցէ յԱսորիս : —\*(Տիւրացիք) ի բանի արարեալ զի՞ղսամոս , սենեկապետ արքայի , խնդրէին զխաղաղութիւն վասն կերակրեցյ նոցա յարգունուստ :

ԶԲԱՆԻՒԹ ԱՆԿԱՆԵԼ. իսուի հետ ըլլալ: իսուի բուռուիլ: \*Մի զրագում բանիւք անկանիր , զի ոչ գոյ որ տայցէ քեզ պատասխանի : —\*Յերկարագոյն նուագօք զբանիւք անկանիին :

ԶԲԱՆԻՒԹ ԳԱԼ. շատ իսուիլ զբուցէլ . իբէն և իբէն ըեւլ:

\*Զի մի երեւեսցի ի մէջ անմտացն իբրև զբանիւք իմն եկեալ:

ԲԱՆ ԵԼ. իսու յան ելաւ: \*Ել բանս այս յեղբարս , և համարեցան թէ աշակերտն այն ոչ մեռանիցի :

Ի ԲԱՆՍ ԵԼՈՒ ԱՌԱՆԵԼ. իսուով իտքել որուալ: \*Նեստոր . . . ի բանս ելու առնել ջանացաւ զբարեսլաշոագոյն թագաւորն մեր :

ԿԱԼ ԲԱՆԻ . իսուին կապարուէլ: անցիէլ: \*Տեսցուք ո'յր բոն կացէ (նային + որ՝ ան իսուը կ'անցիք):

ԲԱՆԱԳՆԱՑ ԼԻՆԵԼ. բանակիլ միջնորդով . իսուլ պատճաճուորով: \*Նախ բանագնաց եղեն , սկսան խօսել ընդ նոսա (ընդ ամրականս,) և ասեն :

ԲԱՆԱԳՏԱԿ ԼԻՆԵԼ. բան ժոնել մոլորդուած . պատճաճուուն+ ընել: \*Ղաւագոյն էր առնել զասացեալն՝ քան չարաբարութեամբ բանագտակ լինել:

ԲԱՌԱՆԱԼ ԹՈՂՈՒԼ. երես յէւլ անուել ընել: \*Բարձի թողի զնոսա երթալ զհետ կամաց սրախ իւրեանց : —\*Վայ են ձեզ , արք ամսաբիշտք , որք բարձէք թողէք զօրէնս Աստուծոց :

Յ. Գ.

## ՊԱՅՄԱՆՔ

---

Ա. Գին միամեայ բաժանորդութեան Հանդիսիս՝ 25 դահեկան ոսկոյ , հատուցանելի կանխաւ .

Բ. Ծախք թղթատարի ի գաւառս և յերկիր օտար դահեկան արծաթոյ 6 ի տարւոջ .

Գ. Զգին բաժանորդութեան , զթուղթ և զամենայն գիր առաքել պարտ է , յանուն խնամակալաց Հանդիսիս , առ Տ. Յովսէփի Գավաֆեան , գրավաճառ ի Կ. Պոլիս , ի Զաքմաքճըլար .

Դ. Զմէն մի օրինակ Հանդիսիս մարթ է ստանալ 3 դահեկանաց առ ամենայն գրավաճառս Կ. Պոլսոյ :



م  
ع  
ار  
ف  
ن  
ظ  
ار  
ت

ج  
ل  
ی  
ل  
ه  
س  
ن  
ک

---

معارف نظارت جلیله سنک ۹۱۰ نومروی رخصتماده سیله طبع او نشدر

---